ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹԵՐԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿՀՀ-Մ/2017

ք. Երևան 30 .01.2017թ.

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ, ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Գրիգորյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **«ՀՀ մամուլի տարածման գործակալություն ՓԲԸ, ի դեմս գործադիր տնօրեն Ա. Մխիթարյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին** սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 **Պատվիրատուն** հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **թերթերի** մատակարարման **պարտավորությունը** (այսուհետև՝ ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 **հավելվածով սահմանված Տեխնիկական** բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 **Ապրանքը** մատակարարվում է սույն պայմանագրի N 1 **հավելվածով** սահմանված Տեխնիկական **բնութագիր-գնման** ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն **իրավունք** ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից ապրանքի մատակարարման **ընթացքը** և որակը՝ **առանց միջամտելու** Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատակարարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում **նշված** Տեխնիկական **բնութագիր-գնման ժամանակացույցին** չհամապատասխանող ապրանք.

ա) Չընդունել ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անհրաժեշտ որակի ապրանքը սույն պայմանագրին **համապատասխանող** ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու **սույն պայմանագրի** 5.2 **կետով** նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 **կետով նախատեսված տույժը.**

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել **վերադարձնելու** ապրանքի52 համար **վճարված գումարը** և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 **կետով** նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: **Կատարողի կողմից** պայմանագիրը խախտելն էական է համարվում, **եթե՝**

ա) մատակարարված ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 **հավելվածով** սահմանված **պահանջներին,**

բ) խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական **բնութագիր-գնման ժամանակացույցին** համապատասխան **մատակարարված ապրանքի** արդյունքը, իսկ ապրանքի մեջ թերություններ **հայտնաբերելու** դեպքերում՝ այդ մասին **անհապաղ գրավոր** հայտնել Կատարողին:

2.2.2 Ապրանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին **վճարել** վերջինիս **վճարման** ենթակա **գումարները, իսկ ժամկետի** խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 **կետով** նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա **գումարները, իսկ** Պատվիրատուի կողմից սույն **պայմանագրի** 4.2 **կետում** նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով **նախատեսված տույժը:**

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված **պայմաններով** ապահովել ապրանքի **մատակարարումը** ՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով **նախատեսված տույժը** և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործընթացի ընթացքում լուծարման կամ սնանկացման **գործընթաց** սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատակարարված ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատակարարման ենթակա ապրանքի ընդհանուր գինը կազմում է 100000 (Մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12. 2017 թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ապրանքի մատակարարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տուգանք՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ապրանք մատակարարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի հանգամանքներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, բնական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև 04.01. 2017 թ-ից ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգավորումը օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն իր կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնված պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրերում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ	<<ՀՀ [illegible]ուլի տարածման գործակալություն>> ՓԲԸ
ք.Երևան, Գ. Քոչարի 21 ա	ք. Երևան Սասունցի Դավթի հր.2
ՀՎՀՀ 01548306	Հ/Հ 1510001986720100
Հ/Հ 900011177095	<< Արարատ բանկ>> ԲԲԸ
Կենտրոնական գանձապետարան	ՀՎՀՀ 00401345
գործառնական վարչություն	
Լ. Գրիգորյան	Ա. U[illegible]
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
«30» հունվարի 2017թ. Կնքված
ԿՀՀ-Մ/2017 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

N	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Նախատեսվում է վճարել ՀՀ-2017-թվականի պետական բյուջեից միջոցների հաշվին, ընդ որում՝												Ընդամենը տարեկան
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ.	սեպտ.	հոկտ.	նոյեմբ.	դեկտեմբ.	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Թերթերի մատակարարում	8400	8400	8400	8400	8400	8400	8400	8400	8400	8400	8400	7600	100000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազ ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Գ. Քոչարի 21ա
ՀՎՀ 900011177095
Կենտրոնական գանձապետարան գործառնական վարչություն

ՀԿՀՀ 01548306
Լ. Գրիգորյան
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

«ՀՀ մամուլի տարածման գործակալություն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Սասունցի Դավթի հրապարակ
ՀՎՀ 1510001986720100
«Արարատ բանկ» ԲԲԸ

ՀԿՀՀ 00401345
Ա. Մխիթարյան
(ստորագրություն)

Հավելված 1
«30» հունվարի 2017թ. Կնքված
ԿՀՀ-Մ/2017 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չափի միավորը	Միավորի արժեքը	Ըստ եռամսյակների գնման ենթակա քանակները				Ընդամենը	
				I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Քանակը	Գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Հայաստանի Հանրապետություն	հատ	100	62	65	65	65	257	25700
2	Հայկական ժամանակ	հատ	200	62	65	65	65	257	51400
3	Իրավունք	հատ	100	33	33	33	31	130	13000
4	Հրապարակ	հատ	100	51	_	_	_	51	5100
5	Հանրային ծառայություն	հատ	100	12	12	12	12	48	4800
	Ընդամենը								100000

ԳՆՈՐԴ

[redacted]
Հասցե՝ ք. Երևան, Գ. Քոչարի 21ա
ՀՎՀ 900011177095
Կենտրոնական գանձապետարան գործառնական վարչություն

ՀՎՀՀ 01548306

Լ. Գրիգորյան
(անձնագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՀՀ Ծանուցի տարածման գործակալություն» ՓԲԸ
Հասցե, ք. Երևան, Սասունցի Դավթի հրապարակ
ՀՎՀ 1510001986720100
«Արարատ բանկ» ԲԲԸ

ՀՎՀՀ 00401345

Ա. Մխիթարյան
(անձնագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
_____ _____ 2017թ. կնքված
N ԿԸՀ-Մ/2017 ծածկագրով գնման պայմանագրի

Գնորդ
ՀՀ կենտրոնական ընտրական
հանձնաժողովի
աշխատակազմ ՊԿՀ
ք. Երևան, Գ.Քոչարի 21ա
ՀՎՀՀ 01548306
Հ/Հ 900011177095; 900011177129
Կենտրոնական
գանձապետարան
գործառնական վարչություն

Վաճառող
"ՀՀ մամուլի տարածման
գործակալություն"ՓԲԸ
հասցե ք.Երևան Սասունցի
Դավթի հր.2
Հ/Հ 1510001986720100
"Արարատբանկ" ԲԲԸ
ՀՎՀՀ 00401345

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝

Գնորդն, ի դեմս ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ և Վաճառողն՝ ի դեմս «ՀՀ մամուլի տարածման **գործակալություն» ՓԲԸ,** հիմք **ընդունելով** վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ "____" "_____" 201 թ. կազմված տեխնիկական **հսկողության հանձնաժողովի /պատասխանատու** ստորաբաժանման/ N_____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ **ստորև նշված մատակարարումները** /այսուհետև՝ Մատակարարում/ համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական **բնութագրերին և գնման** ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը _____ ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ **Մատակարարումները**

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատա-կարարման քանակական ցուցա-նիշները	Մատակարարումների գումարը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ ժամանա-կացույցի/

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության **բաղկացուցիչ** մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
/ստորագրություն/
ազգանուն
Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

_____
/ստորագրություն/
ազգանուն
Կ.Տ.

Հավելված 3.1
կնքված _____ _____ 2017թ.
ՊԿՀ 2-Մ/2017 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի [redacted]ատակազմ ՊԿՀ - ի (այսուհետ՝ Գնորդ) և **«ՀՀ մամուլի տարածման գործակալություն»** ՓԲԸ - ի (այսուհետ՝ Վաճառող) միջև _____ կնքված N _____ ***ծածկագրով*** **գնման պայմանագրի** շրջանակներում Վաճառողը 201___թ. _____ - ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված [redacted]ապանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակ[redacted]գուցան[redacted] (փաստ[redacted])**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն

Կ.Տ. Կ.Տ.